

Ս Ա Յ Ե Ա Թ - Ն Ո Վ Ա Յ Ի Հ Ե Տ ¹

Ես կը սիրեմ Սայեաթ-Նովան,
Որովհետեւ կը սիրեմ բանաստեղծութիւնը,
Գեղեցկութիւնը՝ իր բոլոր ստորագելիներով.
Ահա, կը հասնի ան, խաղերգելէն,
Հովերուն ձայնը ունի իր մէջ,
Եւ լոյսին պայծառութիւնը՝ փռեալներու ծոցին.
Քալուածքը անշեղ է, շարժումները՝ զուսպ,
Բռնաւորին դէմ ծառացող Հաւաքարցին է ան,
Եւ խոնարհին ուղեկիցն ու պաշտպանը,
Մարդ մըն է ան, միակ փամանչալով զօրաւոր մարդ մը.
Ես կը սիրեմ Սայեաթ-Նովան:

Ա՛յ յոգնած եմ ծանր բառերէն, ասացումներէն,
Յոգնած եմ անհասկնալիէն, որ կը խօսի եւ ոչինչ չ'ըսեր,
Կարօտն ունիմ անպանդանին մանուկ ժպիտներուն,
Դէմս կանգնողը կը փափաքիմ որ ըլլայ նակատաբաց մարդ մը,
Ծովուն ձայնին պէս հզօր ներկայացուցիչը՝ մեծ զգացումներուն,
Որ գովերգէ սէրը, տաղերգէ իրաւունքը, փառաբանէ մարդկութիւնը.
Այս բոլորը ես գտայ Սառայի գաւկին մէջ, — այդ կտրի՛նը,
Երբ միասին, 1963ի Հոկտեմբերին, աշնան գոյներուն մէջ,
Կը շրջէինք Հրազդանի ափերուն,
Երբ զոյգ Մասիսները մեր առջեւն էին եւ Արագածը աջին,
Ու Արարատեան դաշտը բամպակի ծովուն մէջ:

Ի՛նչ բախտաւորութիւն էր վայելել իր ընկերութիւնը,
Խօսիլ հետը՝ մայրամուտի լուսնիներուն մէջ,
Ապա երբայ ունկնդրել իր խաղերուն՝
Հայֆիլհարմոնիայի երգիքին տակ,
Ուր մեր ցեղին ֆեմուշ աղջիկները
Կ'երգէին, կը պարէին ու դարձեալ կ'երգէին՝
Աննման աշուղին աննման տաղերը.
Ձեզի հետ եմ դարձեալ, հայ աղջիկ եւ հայ տղայ,
Քեզի հետ՝ փամանչա, եղեգնուտին մէջ քրքռացող սիրտ,
Քեզի հետ՝ մեծ սագանդար, տարօրինակ արարած,
Քեզի հետ՝ Երեւանեան սէր եւ Երեւանեան երջանկութիւն:

Սէրս սիրածս է, փափաքածս,
Ու փափաքածս Սայեաթ-Նովան է, Հաւաքարցին,
Կարապետին կորիւնը, Սառայի աչքի լոյսը,
Ան՝ որ կ'երգէ ամսակի պէս, կը սիրէ վարդն ու գոգալը,
Գոգալները, եղնիկներուն լաւագոյնները...
Թէպէտեւ չփառ, անտուն եւ միմակ,
Մեծահարուստներէն աւելի մեծահարուստ է իր երգը,
Որուն տողերը շողեր են, փռեալները՝ ամրոցներ,
Որոնց բնակիչը դուն ես միշտ, Աննա,
Եւ ուր կը շրջի մարալը, լոյս կու տայ լուսնկան,
Ուր կը թափ սիրտը եւ թեւ կ'առնէ սէրը:

1. Հաստատած՝ «Ահա՛ մեր Հայրենիք» համերգութեան:

1963, Հոկտեմբերին, Երեւանի մէջ,
Հաւաքարցին բռներ էր փողոցները,
Բռնագրաւ էր տուները, հրապարակներն ու քանգարանները
Ամէն ո՛ք կը հոլովէր իր անունը, բանուորը, բանուորուհին,
Բանաստեղծները կը բանախօսէին իր մասին,
Կը խօսէր ֆաղափական մարդը, բանասէրն ու լեզուաբանը,
Երեւանը իր մամուլով եւ Լեհիմականը իր գործարաններով,
Բոլորը, բոլորը կը խօսէին իր մասին.
Ձի չէ՛ կարելի չխօսիլ, երբ փռատողելու բանաստեղծը,
Փոշեհան բանակի մը զօրութեամբ կը յառաջանար մեր վրայ,
Ու իր երգը մեծ տիրակալող մըն էր, անողորմ մը:

Կարմիր բլուրէն մինչեւ Նորֆի բարձունքը,
Նորֆի բարձունքէն մինչեւ Սարի թաղ եւ շրջակայքը,
Հրազդանի եւ Գետաւի վրայ նետուած կամուրջներն անգամ,
Ասպատակած եւ գրաւած էր անդիմադրելի Սայեաթ-Նովան.
Ու չկար ոյժ մը՝ որ յաջողէր կասեցնել անոր յառաջացումը,
Ձկար պատուար մը՝ որ թումբ կանգնէր անոր դէմ.
Ու ան, Կարապետի եւ Սառայի գաւակը,
Հետգիտէ գրաւեց Բարեկամութեան փողոցի թիւ 3 շէնքը,
Ապա՝ իր կնիքը դրաւ Սպենդիարեան քատրոնին վրայ,
Հուսկ կանգ առաւ Մատենադարանի առջեւ եւ նայեցաւ շուրջը, —
Երեւանը կ'ապրէր, կը մեծնա՛ր Երեւանը:

Բայց ի՞նչ էին այդ նուանդին անյաղքահարելի գէնքերը,
Ո՞ր ոյժերով գրաւեց Հայոց աշխարհի Բերդը, —
Լեռներու եւ անդունդներու մեր ամենի Նայիրին, —
Միակ հայ մը՝ երկու միլիոն հայերու դէմ...
Ու իբրեւ թէ չբաւէր իր այս սխրագործութիւնը՝
Անցաւ Ռուսաստան, Վրաստան, Ատրպեյան,
Անցաւ Ուկրաինա, Լիթւանիա, Չեխոսլովակիա,
Աշխարհի այս ու այն կողմը, — փամանչալով.
Թովեց սրտերը եւ տիրեց մարմիններուն, —
Ա՛յս, փամանչա, փամանչա, քիթեռնիկի մը պէս քեքե՛ւ փամանչա,
Երկիրներ նուանող մա՛տ մը փամանչա...:

Շա՛տ լաւ գիտես գերել սրտերը, Սայեաթ-Նովա,
1963, Հոկտեմբերին, լոնցոնցի ֆաղափական մեր աշխարհը...
Եւ աշխարհը գիտութեանց եւ որոնումներու.
Եւ աշխարհը անգամ ինկաւ ցանցիդ մէջ,
Եւ հզօր բանակներուն նարտապետները նոյնպէս,
Երաժիշտներ, ֆանդակագործներ, նկարիչներ՝
Ինկան ցանցիդ մէջ. ի՛նչ խնջոյ՜ք բոլորին համար...
Մոսկուայի մաքսատան խարտեաշ աղջիկն անգամ
Խօսեցաւ քու մասին, Սայեաթ-Նովա,
Մինչ երկնաքեւ հզօր միաբռնիչները,
Մեր շուրջ կ'առնային ծովային անդունդներով...:

Գիշերները, Բարեկամութեան փողոցին թիւ 26 շէնքին մէջ,
Կը մտածէի վրայ, կը կարդայի քեզ,
Կը վերլիճէի կեանքդ՝ Հերակլի արքունիքին մէջ,
Կը տեսնէի Աննան, շուշան մը,
Ապա՝ պալատականները, շատ անկարեւոր մարդիկ,
Հզօր՝ նենգութեան մէջ եւ վատութեան,

Որոնք ժպտեցան առջեւդ եւ փորեցին փռադ,
Մինչ դուն, գեղեցիկ տղայ եւ գեղեցկագոյն քնարահար,
Շարունակեցիր հիւսել տաղերդ՝ ի սէր Աննային,
Աննա՛ն, Կուրի մէջ ինկած լուսնակ մը, —
Ի՛նչ քաղցր էր վիշտդ, հասունցած՝ սիրոյ մէջ:

Ո՞ր պարտեզներէն քաղեմ բառերս,
Սրտիս ո՞ր անկիւններէն քեւ առնեն սիրոյս քոչունները,
Եւ ո՞ր իրկուններուն մէջ շրջիմ յոյգերուս հետ,
Որպէսզի կարենամ վերապրիլ երեսանեան ապրումներս,
Յորում քանչաց Աբովեանը՝ Աբովեան փողոցին վրայ,
Թումանեանը՝ որ կը նայի գոյգ Մասիսներուն,
Յորում քանչաց Չարենց, Տէրեան գետ-փողոցները,
Որոնցմէ հայ զանգուածները կ'իջնէին կենդանի աշխուժով մը,
Որոնցմէ քանչաց Բիշեքը, Բայց սիրեցի ամէնքը,
Եւ այդ ամէնքին յառաջացումը պատկերն էր վերելքի մը, —
Վերածնունդը կը քալէր հայ հողին վրայ:

Տարիները սահեւ էին, չկար երիտասարդութիւնս,
Ու դեռ չէի քանչացած մեր հողը...
Հա՛յ էի, ի՞նչ էի, ի՞նչ իմաստ ունէր կեանքս.
Ինչպէս մեծ եղբորը կը խօսէին անտառներուն հետ,
Ու կայծակը կը նեղէր զարմանահար երկնքին կուրծքը,
Մեծ ձայն մը լսուեցաւ առանձնութեանս մէջ,
Կուռնկի մը պէս, որ կը հասնի երկնային բոյներէ,
Քաղցր էր իր խօսքը, քաղցրագոյն՝ իր հրաւերը, —
Ահա աչքիս առջեւ է վերածաղկած մեր հայրենիքը,
Ահա՛ մեր արեւը, — շողա՛նք անվերջ Հայութեան սուրբ արեգակ,
Հոսեցէ՛ք գետեր, մեծցի՛ր հայ մանուկ:

Ամէն ինչ երկնային էր ու երկրաւոր, —
Ծառերը, քուփերը, քարերը, օդն ու աստղերը,
Մանկիկները հրեշտակներ էին դպրոցներու քամբուն վրայ,
Ամէն կողմ Սայեաթ-Նովան էր կանգնած, քամանչան ի ձեռին,
Ու ամէն տան լուսամուտին՝ գոգալ գոգալ մը.
Օ՛ր, երեսանեան երգչուհիներ, ի՞նչպէս երգեմ ձեզ,
Ի՞նչպէս գովերգեմ ձեր երգած երգերը,
Ի՞նչպէս պանծացնեմ ձեր արուեստին նրբութիւնները,
Երբ կողք կողքի, շարժումնիդ նուաղման մէջ,
Կ'երգէիք Հալաբարցիին սէրը, սրտերնիդ անո՛վ լեցուն, —
Ա՛յս, երեսանեան իմ անոյշ, անո՛յշ փոքրեր:

Սպեղիարեան մեծ քատրոնին մէջ մեծ է տօնախմբութիւնը,
Մեծ են ձայները, մեծ են գովասանքները, մեծ է ամէն ինչ, —
Ամբոխը, խանդավառութիւնը, ծափահարութիւն եւ կեանք.
Ահա, կը խօսի քաղաքական մարդը, ապա գրականագէտը,
Ու կը խօսիք նաեւ դուք, ուս եւ ուկրաինացի քերթողներ,
Կը խօսի հնդիկը, ու կ'ուկրաինացի դուն, Հա՛յ ժողովուրդ,
Ու այս մեծութեանց ի դէպ սիրտս կ'ուռնի՝ դրօշակի մը պէս.
Այս ի՞նչ զգացում է որ կը վարակէ քեզ,
Հին կարօտներու եւ հին սէրերու նոր ուխտաւոր,
Ա՛հ, այս է եղբեր իրական կեանքը,
Ա՛յս է եղբեր նշմարիտ երջանկութիւնը:

Կը սիրեմ՝ ինչ որ իրն է, —
Քամանչան, անոր լարը, լարին վրայի խաղը,
Խաղին բառերը՝ խառնիխառն, այլ մարգարիտ գմբուխի հետ,
Եւ տողէ տող լացող, յուսացող եւ պաղատող սիրտը,
Կը սիրեմ՝ իր սիրած գոգալները,
Նուրբ մարմիններու մէջ ծրարուած կրակէ սէրերը նոյնպէս,
Կը սիրեմ իր յուսահատութիւնը՝ յոյսի մէջ,
Եւ բառերուն տրուած շեշտադրութեան արտաոգութիւնը,
Որ լար կ'ընէ լաւագոյն, լաւագոյն՝ այլագան,
Սովորականը՝ անսովոր, անսովորը՝ հմայիչ, —
Ու մե՛ծ է իր արուեստը:

Բայց լա՛ւ է որ վերջ գտնէ յուզումի այս պահը,
Լա՛ւ է որ կասի ներշնչումը եւ լո՛ւ է քնարը,
Լա՛ւ է որ վերադառնամ առերեսայիս, ապրիմ երկրաւոր կեանքս,
Զի չէ կարելի երկար տոկալ այսպիսի երջանկութեան մը,
Զէ, մարդկայնօրէն չէ՛ կարելի...
Սակայն, չի լսեր զգացումը, անիշխանական սիրտը,
Ահա, ոտքի է ան դարձեալ, կը հնչեցնէ զանգալները,
Ահա, Հայֆիլիարմոնիան կը լեցուի դարձեալ նուագարաններով,
Ու քամանչաները կը քրքրան գերյուզեալ մատներու տակ,
Ու սիրտը կրակէ գունդ մըն է դարձեալ կրակէ վանդակի մը մէջ. —
Սիրենք, սիրենք Սայեաթ-Նովան:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ՍԱՅԵԱԹ - ՆՈՎԱ

ԻՏԱԼԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

12 ՀԱՅԵՐԷՆ, 6 ՎՐԱՅԵՐԷՆ, 6 ԱՏՐՊԵՋԱՆԵՐԷՆ

ԽԱՂԵՐՈՒ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԳ. ՃԱՆԱՇԵԱՆԻ